ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-239-23.01.2018-ԱՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 1992 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-43 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածը լրացնել 10-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«10. հաստատում է սույն օրենքով սահմանված եզրակացությունների տրամադրման կարգերը»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 6. Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի լիազորությունները բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում**

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինն իր իրավասության շրջանակներում իրականացնում է.

1) բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականության մշակումն ու դրա իրականացման ապահովումը.

2) մարդու և հանրության առողջության պահպանման, բնակչության առողջության բարելավման, հիվանդությունների կանխարգելման քաղաքակնության մշակումն ու դրա իրականացման ապահովումը.

3) սանիտարական կանոնների մշակումն ու հաստատումը.

4) բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ դիտարկումների, ուսումնասիրությունների իրականացումը.

5) բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման կազմակերպական մեթոդական ղեկավարումը,

6) բժշկական ու հիգիենիկ գիտելիքների և առողջ ապրելակերպի մասին իրազեկումը»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 7. Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի լիազորությունները**

Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) իրականացնում է՝

Հայաստանի Հանրապետության տարածքում պետական սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունը.

Վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների և թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման նկատմամբ վերահսկողությունը.

սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության իրականացման մեթոդական ղեկավարումը.

բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության զննումների իրականացումը.

բժշկական ու հիգիենիկ գիտելիքների և առողջ ապրելակերպի մասին իրազեկումը»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «Պատգամավորների շրջանային և հանրապետական ենթակայության քաղաքների քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեներ» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ» բառերով:

Հոդված 5. Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասում.

1) 1-ին կետում «արտադրական վերահսկողություն» բառերը փոխարինել «հսկողություն» բառով,

2) 3-րդ կետում «Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությանը» բառերը փոխարինել «Տեսչական մարմնին» բառերով, «տեղական իշխանություններին» բառերը փոխարինել «պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին» բառերով:

Հոդված 6. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մարմինների և» բառերը փոխարինել «Տեսչական մարմնի» բառերով:

Հոդված 7. Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 11. Ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների իրավունքների իրացման երաշխիքները

Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց այն գործողությունը կամ անգործությունը, որը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել սույն օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների խախտման, կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:»:

Հոդված 8. Օրենքի 12-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության քաղաքային, ավանային և գյուղական» բառերը հանել,

2) 2-րդ մասում «միայն Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության համապատասխան մարմնի դրական եզրակացության առկայության դեպքում» բառերը փոխարինել «տեսչական մարմնի կողմից» բառերով,

3) հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով.

«Բնակելի շենքերի շինարարության, վերակառուցման և կառուցապատման նախագծային և նորմատիվային փաստաթղթերի վերաբերյալ դրական եզրակացություն տրամադրում է լիազորված մարմինը»:

Հոդված 9. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 13-րդ հոդվածը:

Հոդված 10. Օրենքի 14-րդ հոդվածում «պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության համապատասխան մարմնի» բառերը փոխարինել «լիազոր մարմնի» բառերով:

Հոդված 11. Օրենքի 15-րդ հոդվածում.

1) 2-րդ մասում «սանիտարական կանոններին դրանց համապատասխանության մասին Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության» բառերը փոխարինել «լիազոր մարմնի» բառերով:

2) 3-րդ մասում «համապատասխան գլխավոր պետական սանիտարական բժշկի» բառերը փոխարինել «Տեսչական մարմնի» բառերով:

Հոդված 12. Օրենքի 16-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «Քաղաքների և այլ բնակավայրերի բնակիչներն ապահովվում են» բառերը փոխարինել «Համայնքն ապահովում է բնակիչների» բառերով,

2) 5-րդ մասում «պատգամավորների տեղական խորհուրդների գործադիր կոմիտեների» բառերը փոխարինել «պետական և տեղական ինքնակառավարման մարմինների» բառերով,

3) 6-րդ մասում «Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության» բառերը փոխարինել «Տեսչական մարմնի» բառերով:

Հոդված 13. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասում «Պատգամավորների տեղական խորհուրդները, նրանց գործադիր կոմիտեները» բառերը փոխարինել «պետական և տեղական ինքնակառավարման մարմինները» բառերով:

Հոդված 14. Օրենքի 19-րդ հոդվածում.

1) Ուժը կորցրած ճանաչել 1-ին մասը:

2) 3-րդ մասում «Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության դրական եզրակացության առկայության դեպքում,» բառերը հանել:

Հոդված 15. Օրենքի 20-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «փաստաթղթերի» բառից հետո լրացնել «այդ թվում սանիտարական կանոնների» բառերով:

2) 2-րդ մասում «պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության» բառերը փոխարինել « լիազոր մարմնի» բառերով:

Հոդված 16. Օրենքի 22-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Առանձին մասնագիտությունների, ինչպես նաև առանձին հիմնարկների և կազմակերպությունների աշխատողները՝ մարդկանց առողջության պահպանման, վարակիչ և մասնագիտական հիվանդությունների կանխարգելման նպատակով, ենթակա են նախնական և պարբերական բժշկական զննության:

2. Բժշկական զննությունների անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, բացառությամբ ?Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին? Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով սահմանված դեպքի:

3. Այն անձինք, ովքեր չեն ենթարկվել նախնական և պարբերական բժշկական զննության, ինչպես նաև, եթե բժշկական զննության արդյունքում ախտորոշվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված հիվանդություններից որևէ մեկը, Տեսչական մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ չեն թույլատրվում աշխատանքի՝ մինչև սահմանված կարգով բժշկական զննության ենթարկվելը, իսկ հիվանդության դեպքում՝ մինչև առողջացումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով»:

Հոդված 17. Օրենքի 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 23. Սանիտարահիգիենիկ փորձաքննությունը**

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում պետական մարմինների կողմից հատուկ կարևորության խնդիրների վերաբերյալ որոշումներ կարող են կայացվել միայն սանիտարահիգիենիկ փորձաքննության առկայության դեպքում:

Պարտադիր սանիտարահիգիենիկ փորձաքննություն է իրականացվում ատոմային էներգետիկայի, շրջակա միջավայրում քիմիական և կենսաբանական արտանետումներ և հոսքեր ունեցող օբյեկտների, ինչպես նաև էկոլոգիական աղետի կարգավիճակ ունեցող գոտիներում օբյեկտների տեղաբաշխման, վերակառուցման և ընդունման, նախադեպ չունեցող նոր տեխնոլոգիաների ներդրման և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Սանիտարահիգիենիկ փորձաքննություն է իրականացվում առողջապահության բնագավառում լիազորված մարմնի կամ պետական մարմինների հանձնարարությամբ, տեսչական մարմնի նախաձեռնությամբ, ինչպես նաև հասարակական, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, բնակչության կողմից բարձրացված սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման հետ կապված հարցերի կապակցությամբ:

Փորձաքննության տվյալների հիման վրա տրված եզրակացությունները քննարկվում և հաշվի են առնվում պետական մարմինների կողմից՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելիս»:

Հոդված 18. Օրենքի 24-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 24. Համաճարակաբանական դիտարկումը, հիվանդությունների կանխարգելումը, պետական հիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունը:**

Համաճարակաբանական դիտարկումը, հիվանդությունների կանխարգելումը Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի գործունեությունն է՝ ուղղված Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանը:

Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինն իրականացնում է՝

համաճարակաբանական դիտարկում՝ առողջության, հիվանդությունների և դրանց տարածման պատճառների ու պայմանների հետ կապված տվյալների շարունակական և համակարգված դիտարկում, հավաքում, վերլուծություն, գնահատում, կանխատեսում և իր իրավասության շրջանակներում որոշումների ընդունում.

հիվանդությունների կանխարգելում՝ դրանց տարածման նվազեցման կամ բացառման ուղղությամբ գործունեության պլանավորում, համալիր միջոցառումների իրականացում և գնահատում.

բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ առաջարկությունների մշակումը

վարակիչ, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների վարչական վիճակագրական հաշվառումը:

Պետական հիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունը վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի գործունեությունն է՝ Հայաստանի Հանրապետության սանիտարական օրենսդրության խախտումների հայտնաբերման, կանխարգելման միջոցով:

Տեսչական մարմնի կողմից պետական հիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունը ներառում է՝

վերահսկողությունը, հիմնարկների, կազմակերպությունների, քաղաքացիների կողմից սանիտարական կանոնների, հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման նկատմամբ.

ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և կարգով պաշտոնատար անձանց և քաղաքացիների նկատմամբ համապատասխան միջոցների կիրառումը, այդ թվում՝ պատասխանատվության.

Պետական հիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության ապահովման նպատակով անհրաժեշտ առաջարկությունների մշակումը.

վարակիչ, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների առաջացման, ինչպես նաև տարածման պատճառների ու պայմանների հայտնաբերումը.

վարակիչ, պրոֆեսիոնալ, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների վիճակագրական տվյալների հավաքումը և վերլուծությունների իրականացումը»:

Հոդված 19. Օրենքի 25-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությանը» բառերը փոխարինել «Տեսչական մարմնին» բառերով:

Հոդված 20. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Կ-239-23.01.2018-ԱՍ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 1992 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-43 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածը լրացնել 10-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«10. հաստատում է սույն օրենքով սահմանված եզրակացությունների տրամադրման կարգերը»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 6. Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի լիազորությունները բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում**

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինն իր իրավասության շրջանակներում իրականացնում է.

1) բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականության մշակումն ու դրա իրականացման ապահովումը.

2) մարդու և հանրության առողջության պահպանման, բնակչության առողջության բարելավման, հիվանդությունների կանխարգելման քաղաքակնության մշակումն ու դրա իրականացման ապահովումը.

3) սանիտարական կանոնների մշակումն ու հաստատումը.

4) բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ դիտարկումների, ուսումնասիրությունների իրականացումը.

5) բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման կազմակերպական մեթոդական ղեկավարումը,

6) բժշկական ու հիգիենիկ գիտելիքների և առողջ ապրելակերպի մասին իրազեկումը»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 7. Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի լիազորությունները**

Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) իրականացնում է՝

Հայաստանի Հանրապետության տարածքում պետական սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունը.

վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների և թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման նկատմամբ վերահսկողությունը.

սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության իրականացման մեթոդական ղեկավարումը.

բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության զննումների իրականացումը.

բժշկական ու հիգիենիկ գիտելիքների և առողջ ապրելակերպի մասին իրազեկումը»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «Պատգամավորների շրջանային և հանրապետական ենթակայության քաղաքների քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեներ» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ» բառերով:

Comment [AM1]: Հոդված 4-ը ավելացել է:

Հոդված 5. Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասում.

1) 1-ին կետում «արտադրական վերահսկողություն» բառերը փոխարինել «հսկողություն» բառով,

2) 3-րդ կետում «Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությանը» բառերը փոխարինել «Տեսչական մարմնին» բառերով, «տեղական իշխանություններին» բառերը փոխարինել «պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին» բառերով:

Comment [AM2]: Հոդված 5-ը ավելացել է:

Հոդված 6. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մարմինների և» բառերը փոխարինել «Տեսչական մարմնի» բառերով:

Հոդված 7. Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Comment [AM3]: Հոդված 7-ը ավելացել է:

«Հոդված 11. Ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների իրավունքների իրացման երաշխիքները

Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց այն գործողությունը կամ անգործությունը, որը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել սույն օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների խախտման, կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:»:

Հոդված 8. Օրենքի 12-րդ հոդվածում.

Comment [AM4]: վերնագիրը խմբագրվել է՝ «կատարել հետևյալ փոփոխությունները» բառերը հանվել են

1) 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության քաղաքային, ավանային և գյուղական» բառերը հանել,

Comment [AM5]: 1-ին մասը ավելացել է

2) 2-րդ մասում «միայն Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության համապատասխան մարմնի դրական եզրակացության առկայության դեպքում» բառերը փոխարինել «տեսչական մարմնի կողմից» բառերով,

3) հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով.

«Բնակելի շենքերի շինարարության, վերակառուցման և կառուցապատման նախագծային և նորմատիվային փաստաթղթերի վերաբերյալ դրական եզրակացություն տրամադրում է լիազորված մարմինը»:

Comment [AM6]: խմբագրվել է՝ «2»-ը փոխվել է «3»-ով

Հոդված 9. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 13-րդ հոդվածը:

Comment [AM7]: Հոդված 9-ը ավելացել է:

Հոդված 10. Օրենքի 14-րդ հոդվածում «պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության համապատասխան մարմնի» բառերը փոխարինել «լիազոր մարմնի» բառերով:

Comment [AM8]: «մարմին» բառը ավելացվել է

Հոդված 11. Օրենքի 15-րդ հոդվածում.

1) 2-րդ մասում «սանիտարական կանոններին դրանց համապատասխանության մասին Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության» բառերը փոխարինել «լիազոր մարմնի» բառերով:

2) 3-րդ մասում «համապատասխան գլխավոր պետական սանիտարական բժշկի» բառերը փոխարինել «Տեսչական մարմնի» բառերով:

Comment [AM9]: խմբագրվել է՝ «Տեսչական մարմնի պաշտանատար անձանց» բառերը փոխարինվել են «Տեսչական մարմնի» բառերով

Հոդված 12. Օրենքի 16-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «Քաղաքների և այլ բնակավայրերի բնակիչներն ապահովվում են» բառերը փոխարինել «Համայնքն ապահովում է բնակիչների» բառերով,

2) 5-րդ մասում «պատգամավորների տեղական խորհուրդների գործադիր կոմիտեների» բառերը փոխարինել «պետական և տեղական ինքնակառավարման մարմինների» բառերով,

Comment [AM10]: Հոդվածի 1-ին և 2-րդ մասերն ավելացվել են

3) 6-րդ մասում «Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության» բառերը փոխարինել «Տեսչական մարմնի» բառերով:

Comment [AM11]: խմբագրվել է՝ «Տեսչական մարմնի պաշտանատար անձանց» բառերը փոխարինվել են «Տեսչական մարմնի» բառերով

Հոդված 13. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասում «Պատգամավորների տեղական խորհուրդները, նրանց գործադիր կոմիտեները» բառերը փոխարինել «պետական և տեղական ինքնակառավարման մարմինները» բառերով:

Հոդված 14. Օրենքի 19-րդ հոդվածում.

1) Ուժը կորցրած ճանաչել 1-ին մասը:

Comment [AM12]: առաջին մասն ավելացվել է

2) 3-րդ մասում «Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության դրական եզրակացության առկայության դեպքում,» բառերը հանել:

Հոդված 15. Օրենքի 20-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «փաստաթղթերի» բառից հետո լրացնել «այդ թվում սանիտարական կանոնների» բառերով:

2) 2-րդ մասում «պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության» բառերը փոխարինել « լիազոր մարմնի» բառերով:

Հոդված 16. Օրենքի 22-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Առանձին մասնագիտությունների, ինչպես նաև առանձին հիմնարկների և կազմակերպությունների աշխատողները՝ մարդկանց առողջության պահպանման, վարակիչ և մասնագիտական հիվանդությունների կանխարգելման նպատակով, ենթակա են նախնական և պարբերական բժշկական զննության:

2. Բժշկական զննությունների անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, բացառությամբ ?Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին? Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով սահմանված դեպքի:

3. Այն անձինք, ովքեր չեն ենթարկվել նախնական և պարբերական բժշկական զննության, ինչպես նաև, եթե բժշկական զննության արդյունքում ախտորոշվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված հիվանդություններից որևէ մեկը, Տեսչական մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ չեն թույլատրվում աշխատանքի՝ մինչև սահմանված կարգով բժշկական զննության ենթարկվելը, իսկ հիվանդության դեպքում՝ մինչև առողջացումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով»:

Հոդված 17. Օրենքի 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 23. Սանիտարահիգիենիկ փորձաքննությունը**

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում պետական մարմինների կողմից հատուկ կարևորության խնդիրների վերաբերյալ որոշումներ կարող են կայացվել միայն սանիտարահիգիենիկ փորձաքննության առկայության դեպքում:

Comment [AM13]: խմբագրվել է՝ «մասնագիտական փորձաքննության» բառերը փոխարինվել է «սանիտարահիգիենիկ փորձաքննության» բառերով

Պարտադիր սանիտարահիգիենիկ փորձաքննություն է իրականացվում ատոմային էներգետիկայի, շրջակա միջավայրում քիմիական և կենսաբանական արտանետումներ և հոսքեր ունեցող օբյեկտների, ինչպես նաև էկոլոգիական աղետի կարգավիճակ ունեցող գոտիներում օբյեկտների տեղաբաշխման, վերակառուցման և ընդունման, նախադեպ չունեցող նոր տեխնոլոգիաների ներդրման և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Սանիտարահիգիենիկ փորձաքննություն է իրականացվում առողջապահության բնագավառում լիազորված մարմնի կամ պետական մարմինների հանձնարարությամբ, տեսչական մարմնի նախաձեռնությամբ, ինչպես նաև հասարակական, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, բնակչության կողմից բարձրացված սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման հետ կապված հարցերի կապակցությամբ:

Փորձաքննության տվյալների հիման վրա տրված եզրակացությունները քննարկվում և հաշվի են առնվում պետական մարմինների կողմից՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելիս»:

Հոդված 18. Օրենքի 24-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 24. Համաճարակաբանական դիտարկումը, հիվանդությունների կանխարգելումը, պետական հիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունը:**

Համաճարակաբանական դիտարկումը, հիվանդությունների կանխարգելումը Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի գործունեությունն է՝ ուղղված Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանը:

Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինն իրականացնում է՝

համաճարակաբանական դիտարկում՝ առողջության, հիվանդությունների և դրանց տարածման պատճառների ու պայմանների հետ կապված տվյալների շարունակական և համակարգված դիտարկում, հավաքում, վերլուծություն, գնահատում, կանխատեսում և իր իրավասության շրջանակներում որոշումների ընդունում.

հիվանդությունների կանխարգելում՝ դրանց տարածման նվազեցման կամ բացառման ուղղությամբ գործունեության պլանավորում, համալիր միջոցառումների իրականացում և գնահատում.

բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ առաջարկությունների մշակումը

վարակիչ, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների վարչական վիճակագրական հաշվառումը:

Պետական հիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունը վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի գործունեությունն է՝ Հայաստանի Հանրապետության սանիտարական օրենսդրության խախտումների հայտնաբերման, կանխարգելման միջոցով:

Տեսչական մարմնի կողմից պետական հիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունը ներառում է՝

վերահսկողությունը, հիմնարկների, կազմակերպությունների, քաղաքացիների կողմից սանիտարական կանոնների, հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման նկատմամբ.

ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և կարգով պաշտոնատար անձանց և քաղաքացիների նկատմամբ համապատասխան միջոցների կիրառումը, այդ թվում՝ պատասխանատվության.

Պետական հիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության ապահովման նպատակով անհրաժեշտ առաջարկությունների մշակումը.

վարակիչ, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների առաջացման, ինչպես նաև տարածման պատճառների ու պայմանների հայտնաբերումը.

վարակիչ, պրոֆեսիոնալ, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների վիճակագրական տվյալների հավաքումը և վերլուծությունների իրականացումը»:

Հոդված 19. Օրենքի 25-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությանը» բառերը փոխարինել «Տեսչական մարմնին» բառերով:

Հոդված 20. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» և այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին նախագծերի փաթեթի (Կ-239-23.01.2018-ԱՍ-011/0) երկրորդ ընթերցմամբ ընդունելու ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ վերաբերյալ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ	«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (Կ-239-23.01.2018-ԱՍ-011/0)	Առաջարկում ենք վերախմբագրել գործող օրենքի 8-րդ հոդվածը, այն համապատասխանեցնել գործող օրենսդրության հետ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ	«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (Կ-239-23.01.2018-ԱՍ-011/0)	Առաջարկում ենք վերախմբագրել և հստակեցնել գործող օրենքի 9-րդ հոդվածում «արտադրական վերահսկողություն» և «տեղական իշխանություններ» հասկացությունները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ	«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (Կ-239-23.01.2018-ԱՍ-011/0)	Առաջարկում ենք վերախմբագրել և հստակեցնել գործող օրենքի 11-րդ հոդվածը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ	«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (Կ-239-23.01.2018-ԱՍ-011/0)	Առաջարկում ենք վերախմբագրել և հստակեցնել գործող օրենքի 12-րդ հոդվածի առաջին պարբերությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ	«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (Կ-239-23.01.2018-ԱՍ-011/0)	Առաջարկում ենք հանել գործող օրենքի 13-րդ հոդվածը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ	«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (Կ-239-23.01.2018-ԱՍ-011/0)	Առաջարկում ենք նախագծի 8-րդ և 9-րդ հոդվածներով առաջարկվող «Տեսչական մարմնի պաշտոնատար անձանց» բառերը փոխարինել «Տեսչական մարմնի» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ	«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (Կ-239-23.01.2018-ԱՍ-011/0)	Առաջարկում ենք վերախմբագրել գործող օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 5-րդ պարբերությունները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ	«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին»	Առաջարկում ենք վերախմբագրել գործող օրենքի 18-րդ հոդվածի 1-ին պարբերությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

	(Կ-239-23.01.2018-ԱՍ-011/0)			
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ	«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (Կ-239-23.01.2018-ԱՍ-011/0)	Առաջարկում ենք վերախմբագրել գործող օրենքի 19-րդ հոդվածի 1-ին պարբերությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ	«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (Կ-239-23.01.2018-ԱՍ-011/0)	Առաջարկում ենք հստակեցնել նախագծի 13-րդ հոդվածով առաջարկվող գործող օրենքի 23-րդ հոդվածում արձանագրված «մասնագիտական փորձաքննություն» իրականացնող մարմինը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (Կ-239-23.01.2018-ԱՍ-011/0)	ա. 6-րդ հոդվածից հանել «հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները» բառերը՝ նկատի ունենալով հիշյալ հոդվածի բովանդակությունը: բ. 6-րդ հոդվածի 1-ին կետը «2-րդ մասում» բառերից առաջ լրացնել «հոդվածի» բառով: գ. 6-րդ հոդվածի **2-րդ կետում** «**2-րդ մասով**» բառերը փոխարինել «**3-րդ մասով**» բառերով: դ. 7-րդ հոդվածը «համապատասխան» բառից հետո լրացնել «մարմնի» բառով՝ նկատի ունենալով օրենքի 14-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջները:	Ընդունվել է:	Ընդունվել է:

ՀՀ կառավարություն	«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածը Կ-239[1]-23.01.2018-ԱՍ-011/1	Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	«Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ Կ-239[3]-23.01.2018-ԱՍ-011/1	Նախագծի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 3. Օրենքի 8-րդ գլխի վերնագրում, 38-րդ հոդվածի վերնագրում, 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «հսկողությունը» բառերը փոխարինել «վերահսկողությունը» բառերով:»: բ. 4-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) վերնագրում, 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում «հսկողություն» բառը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «վերահսկողություն» բառով:»: գ. 4-րդ հոդվածի 2-րդ կետը «տեսչական մարմինը» բառերից հետո լրացնել «բառերով» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջների: դ. 4-րդ հոդվածի 3-րդ կետում «բառից» բառը փոխարինել «բառերից» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի	Ընդունվել է:	Ընդունվել է:

		պահանջները:		
ՀՀ կառավարություն	«Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ Կ-239[8]-23.01.2018-ԱՍ-011/1	ա.վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹ-ՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերով, քանի որ նախագծի 2-րդ հոդվածով նաև լրացում է նախատեսված: բ. 2-րդ հոդվածով լրացվող 6.1-րդ հոդվածի 2-րդ մասում «լիազոր մարմնի» բառերը փոխարինել «վերահսկողություն իրականացնող մարմնի» բառերով՝ նկատի ունենալով 6.1-րդ հոդվածի վերնագրի և 1-ին մասի պահանջները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ Կ-239[12]-23.01.2018-ԱՍ-011/1	Նախագծի 1-ին հոդվածում «կետերը» բառը փոխարինել «պարբերությունները» բառով՝ նկատի ունենալով նշված օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ և 70-րդ հոդվածների պահանջները:	Ընդունվել է:	Ընդունվել է: